Արտակ Օհանյան ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ




Artak Ohanyan CARICATURES



On March 21st 2002 the first issue of the newspaper “Civil Initiative” was printed. It was initiated with the aim of filling in the gap in the information field of human rights sphere in Vanadzor. It was at that time that it occurred to me to have an artist for the newspaper, who could express the essence of the situation and problems through caricatures enabling the reader to get the full picture. One of my friends recommended Artak Ohanyan, whom I did not know before. Some time later, we met and I presented our expectations. The interesting thing was that the genre of caricatures was an opportunity for Artak. In other words, none of us imagined what might develop. During this time a new sphere was formed in our activity, which is hard to define. Let's call it a cartoon on political topics, but this doesn't mean, that we are presenting politics. Let's call it a genre of cartoons on public topics. But it is a very general description. Taking into consideration that in our materials we focus on revealing human rights violations and the ones who perform them, it would be right to call that sphere rights protection through cartoons.

Anyhow, we present you with what we have. It is the general picture of all of the parts created by Artak during the last 4 years.

Our Dutch partners agreed to support us in presenting the full picture to society. This is Artak Ohanyan's first effort in this genre with which he introduces himself to the public. I hope that it will not be the last.

A. Sakunts

2002 թ-ի մարտի 21-ին լույս տեսավ «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթի առաջին համարը, որը նախաձեռնվեց՝ նպատակ ունենալով լրացնելու Վանաձորում լրատվական դաշտը մարդու իրավունքների բնագավառում: Այդ ժամանակ էր, որ միտք հղացավ ունենալ թերթի նկարիչ, որը ծաղրանկարների միջոցով կարտահայտեր իրավիճակը, խնդիրների բուն էությունը՝ հնարավորություն տալով ընթերցողին ավելի ամբողջական պատկերացում կազմել: Ընկերներիցս մեկը երաշխավորեց Արտակ Օհանյանին, որին մինչ այդ չգիտեի: Որոշ ժամանակ անց հանդիպեցինք, և ես ներկայացրեցի մեր ակնկալիքները:

Հետաքրքիրն այն էր, որ ծաղրանկարի ժանրը հնարավորություն էր նաև Արտակի համար: Ոչ մեկս էլ չէինք պատկերացնում, թե ինչ կունենանք: Բայց ժամանակի ընթացքում մեր գործունեության մեջ ձևավորվեց մի նոր բնագավառ, որին միանշանակ ձևակերպում դժվար է տալ: Գուցե դա անվանեք քաղաքական թեմաներով շարժանկար, բայց մենք քաղաքական նպատակներ չենք հետապնդում, գուցե հասարակական թեմաներով շարժանկարի ժանր, բայց դա շատ ընդհանուր որակում է: Հաշվի առնելով, որ մենք մեր նյութերում ավելի շատ անդրադառնում ենք մարդու իրավունքների խախտումներին, դրանց կատարողների գործողությունների բացահայտմանը, երևի թե ավելի ճիշտ կլինի անվանել այդ իրավա-պաշտպանություն շարժանկարների միջոցով:

Ինչևէ, ունենք այն, ինչը ներկայացնում ենք Ձեզ, որը հանրագումարն է առանձին կտորների՝ ստեղծված Արտակի կողմից անցած 4 տարիների ընթացքում:

Մեր հոլանդական գործընկերները համաձայնեցին աջակցել, որ այդ ընդհանուր պատկերը ներկայացնենք հանրությանը: Սա Արտակ Օհանյանի առաջին փորձն է այս ժանրում, որով նա ներկայանում է հանրությանը: Եվ հուսով եմ, որ այն կունենա իր շարունակողները:

Ա. Սաքունց

Արտակ Օհանյան

ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ

# Հայաստանն այսօր

# Armenia Today



Կառուցիր տունդ որտեղ ուզում ես,
երբ ուզում ես...

Build your house wherever
and whenever you want...



«Տնտեսական»

Հայաստանը դարձավ իշխանությունների փորած գերեզմանափոսը

“Economic”

Armenia became the grave dug by the authorities

«Ժամկետանց պահածոներ Իտալիայից»
31.05.04-8/37/

Մեծ էր զարմանքը աղքատների, երբ իտալական արտադրության որակյալ պահածոների փոխարեն մատուցվեց ժամկետանց սնունդ: Իրենց անպետք սնունդը թափելու փոխարեն իտալացիները գերադասեցին այն Հայաստան առաքել: Այսպես էլ է պատահում:




“Overdue Canned Food from Italy”
31.05.04-8/37/

The poor were very surprised when overdue food was served instead of high quality canned food made in Italy. The Italians preferred exporting useless food to Armenia instead of throwing it away. This really can happen.

«Չարված հեղափոխություն»
15.04.06-7/77/

Անհեռանկար ապագայի համար ոչ ոք հեղափոխության չի գնա: Միայն հեղափոխական կոչերով սնված քաղաքացիներն այլևս հավատ չունեն հեղափոխականների նկատմամբ: Ապագայի միակ շոշափելի խորհրդանիշը փուչիկներն են, որոնք ամեն վայրկյան կարող են պայթել ու լրացնել անհեռանկար ապագայի դատարկությունը:



“Unfulfilled Revolution”
15.04.06-7/77/

For a future without prospects no one will undertake revolution. Citizens who heard only revolution calls don't believe revolutionaries any more. The only tangible symbols of future are the balloons which can blow up at any moment.

«Աղքատության պիկը Հայաստանում»

“The Culmination of Poverty in Armenia”






«Մենք կգնանք, վառ հուշեր կմնան»

Աղքատ եկանք, հարուստ կերթանք

“We Will Go, Vivid Memories Will Remain”

We came poor but we left rich

«Հասարակության հաշվին»
15.02.06-3/73/

Այս անգամ վանաձորյան հասարակության հաշվին բարձրացվեց ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձը: Քաղաքային իշխանությունները թույլ տվեցին ուղևորափոխադրումների տերերին դիմել այդ քայլին կորուստները փակելու պատրվակով: Իրականում նպատակը գերշահույթ ստանալն է:

“To the Detriment of Society”
15.02.06-3/73/

This time prices of intercity transport were raised to the detriment of Vanadzor society. Local authorities allowed the transport companies to undertake that step allegedly to make up for loss. In reality, the goal is to get super-profit.





«Կեցցե Սեպտեմբերի 21-ը»
25.09.03-12/24/

Նորանկախ պետության քաղաքացիներն անկախության տոնով ամենևին էլ հետաքրքրված չեն: իշխանությունների անտարբերությունը իրենց իսկ կողմից հռչակած տոների նկատմամբ փոխանցվել է քաղաքացիներին: Արդյունքում տոնակատարություններին փոխարինել է տխուր ու ոչինչ չասող դեմքերի հավաքը:

"Bravo, September 21"
25.09.03-12/24/

The citizens of the newly independent state are not at all interested in the Day of Independence . The indifference of authorities towards the holidays that they declared, passed to citizens. As a result, celebrations are replaced by a collection of sad faces.

«Հայ գյուղացու սիզիֆյան աշխատանքը»
18.10.03-15/27/

Որքան էլ գյուղացին քրտինք թափելով մշակում է հողամասն ու սպասում իր աշխատանքի պտուղներին, միևնույն է, արդյունքը չի երևում: Գյուղի հողը սահում է ու իր հետ ջուրը գցում գյուղացու բերքն ու բարիքը:

"Sisyphus Labour of Armenian Peasants"
18.10.03-15/27/

Though the peasant works hard to cultivate his garden, he can't get a proper harvest. The land of the village slides down and all the crops go to waste.





«Սպիտակ ձեռնոցներով նախագահը»

Երկրի նախագահի սպիտակ ու մաքուր ձեռնոցները չկեղտոտվեցին ժողովրդի քրտինքով: Նա այդպես էլ կհեռանա իր գահից:

"The President in White Gloves"

The white and clean gloves of the country's president never got dirty with the sweat of the people. He will leave his throne in this way.

Արտակ Օհանյան

# ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ




«Օրենք»

Այն հավասար է բոլորի համար, սկսած մանր ու խոշոր մարդուկներից:

“Law”

It applies equally to everyone.




«Իրավունքի օրը Հայաստանում»

Մարդու իրավունքները մեր երկրում գրված են մաքուր ու սպիտակ թղթի վրա, որն օգտագործվում է միայն զուգարանում: Մարդու իրավունքը պաշտպանված է Հայաստանում:

“Human Rights Day in Armenia”

Human rights in our country are written on a clean, white paper, which is used only in the toilet. Human rights are protected in Armenia?



«Մուրալ իշխանավորից»
15.05.06-9/79/

Հայաստանյան իրականությունում մուրում են նույնիսկ սեփական թոշակները: Սոցիալական քարտերից հրաժարված քաղաքացիները նամակ են հղել ՀՀ վարչապետին՝ խնդրելով վճարել 18 ամիսների չստացած աշխատավարձերը, կենսաթոշակներն ու նպաստները: Նրանք սովամահ են լինում հոգևոր համոզմունքների պատճառով:

“To Beg from the Official”
15.05.06-9/79/

In Armenian reality one begs even for one’s own pension. Citizens who refused to get the social cards necessary to receive one’s salary and pension sent a letter to RA Prime Minister asking for the salaries, pensions and allowances that they hadn't received for 18 months. They die of hunger because of spiritual beliefs.

«BOSS»

Ագահ թագավորի օրը կտրի: Որքան էլ տաս, նա քաղցած է ու չի բավարարվում ձեռքի տակ ունեցածով: Մի գրոշի առջև պատրաստ է վայր դնել անգամ պատիվը:

“Boss”

The king is greedy. The more he gets, the hungrier he becomes. He is not satisfied with what he has. He is ready to betray his honour.






«Ով վճարում է, նա էլ պատվիրում է»
15.02.06-3/73/

Հայտնի սկզբունքից անմասն չի նաև ՀՀ կառավարությունը: «Հազարամյակի մարտահիրավերների» ծրագրով Հայաստանին ԱՄՆ կառավարությունը տրամադրել է 235 միլիոն դոլար: Բայց պայմանով, որ հայերը սկսեն ապրել իրենց թելադրած ժողովրդավարական սկզբունքներով:

“The One Who Pays Orders”
15.02.06-3/73/

RA Government has his share in this well-known principle. By the project “Millennium Challenges” the US government allocated Armenia $ 235 million, but required that Armenians start living according to democratic principles that have been dictated to them.

«Սուրբ չինովնիկի հայտնությունը»
19.10.04-15/44/

Այստեղ Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանն է: Նրա օրոք վերականգնվեցին քաղաքի ավանդույթները, որոնք մեծ շուքով է նշում քաղաքապետն իր թիմի հետ: Այնքան տարված ու խանդավառությամբ, որ փորձում է մոռացնել տալ նույն քաղաքապետի անօրինական արարքներն ու ապօրինությունները:

“The Apocalypse of the Holy Official”
19.10.04-15/44/

Here is Samvel Darbinyan, the mayor of Vanadzor. During his time the traditions of the town have been restored, which he celebrates with his team with grandeur. He is so interested and  enthusiastic that he tries to draw attention away from his illegal actions, hoping that they will be overlooked.




8
Արտակ Օհանյան
ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ
Արդար ընտրություններ
Fair Elections



Հետընտրական չու

Post-electoral Flight




«Կանխորոշված ընտրություններ»

Արդյունքները կանխատեսել էին նույնիսկ ընտրությունից շատ առաջ: Նույնիսկ հավասարակշռություն խաղացող լրատվամիջոցների հավասարակշռության լծակը տատանվում էր դեպի «ընտրյալը»:

“Anticipated Elections”

The results of elections were anticipated long ago. The lever of the mass media which pretended to be balanced actually dipped for the designated candidate.

«Ֆոկուս-մոկուս- Սահմանադրություն»
30.11.05-21/68/

Արդյունքում ծնվեց փոփոխված Սահմանադրությունը: Ի տարբերություն աճպարարական հնարքի, սահմանադրական հնարքը անմաքուր ձեռքերի ծնունդ է, հետևաբար անառողջ մի երևույթ:

“Hocus-Pocus Constitution”
30.11.05-21/68/

A change in Constitution resulted. Unlike the magician's skills, the constitutional method is a result of dishonest hands. Therefore it is not a healthy phenomenon.





«Ամենաէժան ձայնը»

Ձայն եմ ծախում, դառը ձայն: Այն ամենաէժանն է ու անհրաժեշտը:

“The Cheapest Voice”

Selling a voice, bitter voice. It is the cheapest and the most necessary.




«Սահմանադրական հանրաքվեի սինդրոմ»
15.12.05-22/69/

“Syndrome of Constitutional Referendum”
15.12.05-22/69/



«Մրցութային ընտրավազք»
28.02.03-2/14/

Ծաղրանկարն արդեն կանխորոշում է, թե ով առաջինը կհատի վերջնագիծը: Երեք մասնակիցներից միայն մեկի առջև է նախանշված կարճ ու հարթ ճանապարհ: Ընտրավազքի արդյունքն ակներև է, հաղթանակը՝ ապահովված:

“Electoral Race”
28.02.03-2/14/

The caricature already anticipates who will be the first. The result is obvious, the victory is provided for.

«Բոլորն են խոստանում արդարություն,բայց…»
29.04.03-4/16/

Խոստումների կատարման ժամանակն է տարբեր: Մեկի արդարությունն արդեն անցյալում է, մյուսինը՝ դեռ չի եկել, երրորդն էլ հավատացնում է, թե այն արդեն այստեղ է: Ծաղրանկարը ծաղրում է քաղաքական այրերի անգրագիտությունն ու ողբում քաղաքացու թշվառությունը:

“Everyone Promises Justice, But...”
29.04.03-4/16/

The time of executing promises is different. One's justice is in the past, the other one's has not come yet, the third one assures that it is here now. The caricature presents the illiteracy of political actors and mourns for the poor citizens.



«Սահմանադրական հանրաքվե-պտտախաղ»
30.11.05-21/68/

Խաղի հիմքում ընկած է Հայաստանի քարտեզը, խաղադրույքը՝ ընտրողների քվեն, իսկ խաղամոլները՝ իշխանության ղեկին հայտնված երկու անձինք: Նրանք թքած ունեն…

“Constitutional Referendum-Roulette»”
30.11.05-21/68/

The basis of the game is the map of Armenia, the votes are at play and the gamblers are the two persons having the power.



«Ոչխարների լռություն»

Այն ոչխարային է: Փողի դիմաց կարելի է նույնիսկ արձագանքել կենդանակերպ ձայներով կամ էլ լռել ոչխարային հնազանդությամբ:

“Silence of the Lambs”

It is sheepish. For money you can make animal voices or keep silent with sheepish obedience.



Աշխարհի ամենաարդար
դատարանները մեզ մոտ են` Հայաստանում

We Have the Most Fair Courts in Armenia



«Կաշառքի քաշը»

Ծանր է: Հատկապես դատավորի համար: Ստիպված քաշում է ու քաշում:

“The Weight of Bribe”

It is heavy, especially for the judge. He has to pull and pull.





«Լավ պաշտոն»

Նման է սատանայի նստավայրին: Վաճառվում է միմիայն հոգու գնով:

“Good Position”

It is like the devil's residence. It is on sale only at the expense of a spirit.

«Դատաիրավական անպատասխանատվություն»
04.04.03-3/15/

Որքան էլ իշխանությունները փորձում են բարեփոխել այս կամ այն ոլորտը, այդ թվում՝ դատաիրավականը, միևնույնն է, ոչինչ չի փոխվի: Հայաստանում այն կմնա անպատասխանատու այնքան ժամանակ, մինչև չլինի քաղաքական կամք:

“Judicial Irresponsibility”
04.04.03-3/15/

It doesn't matter how much the authorities try to start reforms in this or that sphere, including the judicial field. Regardless, nothing will change. In Armenia it will remain irresponsible as long as there is no political will.





«Համակարգի տիկնիկները»

Կենտրոնում դատավորն է: Քրեածին տարրերը համակարգի խամաճիկներն են: Խաղում են դատավոր սցենարով: Այլ կերպ չեն կարող ու չեն էլ ուզում:

“The Marionettes of the System”

The judge is in the center. Criminals are the puppets. They play according to the judge's scenario. They can't or they won't otherwise.




Հայաստանի օրենսդրությունը նպաստում է անկախ լրատվամիջոցների զարգացմանը

The Legislation of Armenia Supports the Development of Independent Media



«Մամուլի ազատությունը նշանառության տակ»

Բավական է օրենքի մի հարված, և մամուլը կտապալվի:

“The Freedom of Information Targeted”

One blow of the law is enough to knock the press down.

«Տեղեկատվության ազատությունը Հայաստանում»
04.04.03-3/15/

Գրաքննությամբ փակված բերանով, պետական հսկողությամբ կապկպված ձեռքերով, արտոնագրով շղթայված ոտքերով լրագրող: Տեղեկություններ ձեռք բերելու ու տարածելու համար շատ դռներ են փակվում նրա առջև: Բացելու համար տարիներ կանցնեն:

“Freedom of Information in Armenia”
04.04.03-3/15/

A journalist with his mouth closed by censorship, with his hands tied by state control, and his legs chained by license. It will take years to free.




«Մամուլի ազատություն»
31.10.05-19/66/

Փակել լրատվամիջոցն ու բանալին կուլ տալ հանուն հավետ փակ մնալու: Հայաստանյան իշխանություններին բնորոշ գործելակերպ:

“Freedom of Information”
31.10.05-19/66/

To close the media and to swallow the key to be closed forever. A way of behaviour typical of Armenian authorities.



Արթուր Օհանյան





# Բանակը՝ խաղալիք մեծահասակների համար

# Army - A Game for Adults





«Զուգարանի ապստամբները»

«Կոտրվածները» ուզում են մաքրել, բայց ոչ զուգարան:
Մենք «կոտրվածներն ենք» հայոց բանակի:

“The Toilet Fighters”

The oppressed want to clean but not a toilet.
We are the oppressed of the Armenian army.



«Բանակի երկնագույն երանգները»

Այն սիրված ու պաշտպանված է հայոց բանակում:
Դրանով են «խաղում» մեծերը բանակում:

“The Gays of the Army”

It is loved and protected in the Armenian army. The ones in power ”play” with them in the army.

«Այլընտրանքային ծառայության մասին օրենք»
25.09.03-12/24/

Օրենքի բովանդակությունը Հայաստանում մեկն է՝ կամ զենք, կամ ցախավել:

“Law on Alternative Service”
25.09.03-12/24/

The law gives two options: you can either choose a weapon or a broom.






«Հավաքների մերկ ուժը»
15.10.03-13/25/

“The Naked Power of Recruitments”
15.10.03-13/25/

«Հարցի արժեքը»

Կախվել, թե՝ ստորանալ: Մտորում է մտածող մարդը:

“The Cost of the Question”

To be hung or to be degraded?




Իմ ոստիկանությունն է
քեզ պահպանում
It is Our Police
That Protect Us



«Ծեծիր և ստացիր»
23.04.04-6/35/

Ծաղրանկարում ՀՀ նախագահը պարգևների արժանացրեց այն ոստիկաններին, ովքեր մահակներով ծեծի ենթարկեցին 2004թ-ի ապրիլյան հանրահավաքի խաղաղ մասնակիցներին: Սեփական ժողովրդին քոթակելու համար ոստիկանները իրենց տոնի առթիվ մեծարանքի արժանացան:

"Beat and Be Awarded"
23.04.04-6/35/

In this picture RA president awards the policemen who beat with batons the peaceful demonstrators of April 2004.The policemen were honoured for beating their own people.

«Այսօր այստեղ, վաղը՝ այնտեղ»
04.04.03-3/15/

Եթե այսօր քեզ բանտարկել են ինչ-որ հանցանքի համար, ամենևին չի նշանակում, որ վաղը չես կարող դու ուրիշին բանտարկել: Այսօրվա ոստիկանը վաղվա հանցագործն է: Կյանքն աստիճաններ է բարձրանալու ու գլորվելու համար:

"Today over Here,Tomorrow over There"
04.04.03-3/15/

If you have been imprisoned today for some fault, it doesn't mean that you cannot imprison another one. Today's policeman is tomorrow's criminal. Life is a step to go up and roll down.





«Անգղերի երթը»

Երթևեկության կանոնները խախտող վարորդին սպառնում է հոշոտման վտանգը: Պետավտոտեսուչների հարձակումը սպասվում է նույնիսկ երկնքից՝ անգղի թևերով նա վրա կհասնի ու իր բաժինը կպահանջի:

“March of Griffons”

The drivers who violate traffic rules are expected to be ripped apart. The attack of highway police is expected even from the sky. He will come and demand his share.

«Յանցագործությունների անկման փաստողը»

Ճիշտ է, հանցագործությունները նվազել են, բայց ոչ վերացել: Անգամ դատախազի քթի տակից կարող է փախչել հանցագործն ու աննկատ մնալ չտեսնող դատախազի աչքերից:

“The One Who Preaches the Fall of Crimes”

Though crimes have decreased they haven't been abolished. The criminal can escape even from under the prosecutor's nose and be invisible for the prosecutor.



Արրակ Օհանյան

ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ

# Miscellaneous



# Զանազան



«Օդում գրանցվածները»

Վանաձորի օդը հարուստ է չգրանցված քաղաքացիներով՝ տնակների բնակիչներով: Օդում կախվածներին չեն տեսնում քաղաքային իշխանությունները: Նրանք չեն երևում:

“Registered Nowhere”

The air of Vanadzor is full of citizens who have no registration - they are the inhabitants of temporary dwellings. Only authortities do not see the ones who are hung in the air. They are overlooked.

«Դժվար ուտելի բան բռնես»

Հայաստանի գետերում պետք չէ որս փնտրել: Դրանք ապականված են:

“You Can Hardly Catch Something Edible”

You shouldn't fish in the rivers of Armenia. They are polluted.





Առանց խոսքի

No Comments



«Խեղդվողը փրփուրներից է կառչում»
16.06.05-11/58/

Ամեն մի ինքնասպանության գնացող մարդ ի վերջո օգնության հույսով է մահանում: Ինքնասպանի փրկությունը իր ձեռքերի ու երազանքի մեջտեղում է:

“One Who is Drowning Will Even Clutch at a Straw”
16.06.05-11/58/

Everyone who wishes to commit suicide still hopes another will save him. In reality, his salvation is in his own hands.



«Աղքատի վերջին հույսը»
4.12.03-16/28/

Մնում են խոշոր շահումները: Կար ժամանակ, երբ Հայաստանում գոյատևելու միակ ելքը լոտոներն ու բազմապիսի շահումներն էին: Շահելու ախտը հիմարացրել ու վարակել է մի ողջ ազգ: Դեռ չենք բուժվել:

“The Last Hope of the Poor”
4.12.03-16/28/

Once lottery was the only way of surviving in Armenia. The disease of winning infected and fooled a whole nation. We haven't been cured yet.



«Ուրիշի տունը պանրի դիմաց»
15.10.03-13/25/

Ագռավային ախորժակով համակված են նաև մարդիկ: Հատկապես նրանք, ովքեր իշխանության ղեկին են հայտնվել: Կաշառքի դիմաց ինչեր ասես չեն անի նրանք: Նույնիսկ ընդունակ են մարդու սեփական բնակարանը խլել ու նվիրել նրան, ով կհագեցնի ագռավային էժանագին ախորժակը:

“Other’s House for Cheese”
15.10.03-13/25/

People are greedy like the crow, especially those who hold power. They would do anything for a bribe. They even seize another’s apartment and give it as a present to the one who will quench their greed.

Պարզվում է՝ Հայաստանում գերիշխող դիրքում է Ստվերային նախարարությունը: Նրա գոյության մասին, ճիշտ է, ոչ ոք հաստատ ոչինչ չգիտի, բայց որ այն կա ու գրպանում է մեր փողերը, հաստատ է:

It turns out that in Armenia the Shadow Ministry has a ruling position. It's true that no one is sure of its shape or form, but it surely exists and pockets our money.





Ամենակեր կոռուպցիան

"All-devouring Corruption"



Նրանք միշտ անհասանելի են, անգամ իրենք իրենց համար: Որքան էլ փորձես նրանց փնտրել, միևնույնն է, նրանք ամենուրեք են և անտեսանելի:

They are always unreachable, even for themselves.

Հաճախ անպատասխանատվութունը պատուհաս է դառնում անգամ պաշտոնյաների գլխին: Կարևոր գործի փոխարեն չինովնիկները հաճախ վազում են թիթեռների հետևից:

Often irresponsibility becomes a disaster for officials. Bureaucrats run after butterflies instead of important work.







Ազատության և հավասարության սեփական տարբերակը:Հաճախ այն խաբուսիկ է:

One’s perception of freedom and equality. It is often deceptive.

Անդեմ հասարակություն

Society without Faces








Նկարների հեղինակ` Արտակ Օհանյան

Խմբագիր` Արթուր Սաքունց

Խմբագրակազմ` Նաիրա Բուլղադարյան
Արմինե Սադիկյան
Էդգար Խաչատրյան
Պասկալ Բոկկերս

Caricatures by Artak Ohanyan

Editor Artur Sakunts

Editorial Staff Naira Bulghadaryan
Armine Sadikyan
Edgar Khachatryan
Pascal Bokkers




*Address: 59 Tigran Mets, Vanadzor, Republic of Armenia*
*Tel: (+374 322) 4 22 68*
*E-mail: hcav@hcav.am; asakunts@hcav.am*
*Web-site: http://www.hcav.am*

Helsinki Citizens' Assembly Vanadzor

Interchurch Organization for Development Cooperation (ICCO)

Interchurch Peace Council (IKV)

Vanadzor 2006